



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

« _____ 20 թ.

N _____

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՐԻՑՅԱՆԻՆ

Ի կատարումն ՀՀ վարչապետի 16.12.2015թ.
N 02/23.17/21446-15 հանձնարարականի

Հարգելի պարոն Երիցյան,

Քննարկման է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության կառավարության
2013 թվականի հոկտեմբերի 23-ի N1250-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու
մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացնել Ձեր առարկություններն
ու առաջարկությունները ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման նախագծի վերաբերյալ:

Առդիր՝ 5 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝
տնտեսական բաժնի պետ
Հ. Նիկողոսյան հեռ.011-50-73-36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

«.....» 2016 թվականի N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1250-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝
1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի «Գույք հանձնելու մասին» N1250-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) որոշման 2-րդ կետում «2015» թիվը փոխարինել «2016» թվով,
2) որոշման հավելվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ և 22-րդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

5.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	ուսումնական շենք	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	35881835
6.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	հանրակացարան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	0
7.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	սպորտ դահլիճ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	0
8.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	ակումբի դահլիճ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներով կատարվում են շինարարական աշխատանքներ, որի ավարտից հետո ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից հիմք կընդունվի հստակ հաշվեկշռային արժեքը:
9.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	ակումբ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներով կատարվում են շինարարական աշխատանքներ, որի ավարտից հետո ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից հիմք կընդունվի հստակ հաշվեկշռային արժեքը:
10.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	ավտոտնակ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	0
11.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	կաթսայատուն	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	0
12.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական	ճաշարան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ,	0

	ցյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ		Ազատության 38	
13.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական ցյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	Էլեկտրական ենթակայան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	0
14.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական ցյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	պարիսպ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	Պարիսպը գտնվում է վերակառուցման փուլում: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից հիմք կընդունվի հստակ հաշվեկշռային արժեքը:
15.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական ցյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	նոր կաթսայատուն	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	Կաթսայատունը գտնվում է վերակառուցման փուլում: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից հիմք կընդունվի հստակ հաշվեկշռային արժեքը:
16.	«Գավառի ակադեմիկոս Ա. Թամանյանի անվան պետական ցյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	միջանցք	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ազատության 38	0
	ընդամենը			35881835
19.	«Վանաձորի պետական ցյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	քոլեջ	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Վանաձոր, Ուսանողական 9	806584
20.	«Վանաձորի պետական ցյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	քոլեջ	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Վանաձոր, Ուսանողական 9	155426
21.	«Վանաձորի պետական ցյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	դահլիճ	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Վանաձոր, Ուսանողական 9	Համաձայն ՀՀ կառավարության 18.06.2015թ. թիվ 673-Ն որոշման թիվ 3 հավելվածի կատարվում են շինարարական աշխատանքներ, որի ավարտից հետո ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից հիմք կընդունվի հստակ հաշվեկշռային արժեքը:
22.	«Վանաձորի պետական ցյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ	Էլեկտրական ենթակայան	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Վանաձոր, Ուսանողական 9	0
	ընդամենը			962010

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1250-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> << ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անհրաժեշտությունը

Սույն որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N 1250-Ա որոշման կիրարկումն ապահովելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N 1250-Ա որոշման 2-րդ և 3-րդ կետերը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության ներկայացուցիչները գույքի հանձնման-ընդունման գործընթացն իրականացնելիս, տեղազնման աշխատանքերի ընթացքում, հայտնաբերել են մի շարք անճշտություններ: Մասնավորապես՝ «Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ում 2014 և 2015 թվականներին պետական բյուջեի մասին օրենքի 09 բաժնի, 06 խմբի, 1-ին դասի, 2-րդ ծրագրով կառուցվում է հանդիսությունների մասնաշենք, որի շինարարական աշխատանքներն ամբողջովին ավարտված չեն, անշարժ գույքի սեփականության վկայականում փոփոխություն կատարված չէ, առկա չէ նաև գույքի արժեքը: Նոր կառուցված կաթսայատան և պարսպի արժեքները նույնպես առկա չեն, իսկ «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ում ՀՀ կառավարության 18.06.2015թ. թիվ 673-Ն որոշման թիվ 3 հավելվածի համաձայն՝ մարզական օբյեկտների շինարարության հողվածով ներկայումս վերակառուցվում է նոր մարզադահլիճը, որի շինարարական աշխատանքները նույնպես ավարտված չեն: Քոլեջի մասնաշենքերը միացնող միջանցքը գտնվում է կիսաքանդ վիճակում: Տարածքում առկա էլեկտրական ենթակայանը գույքի վերաբերյալ տեղեկատվության մեջ արժևորված չէ:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N 1250-Ա մշակվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշումը, որի 1-ին կետի համաձայն պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված շենքերն ու շինությունները (տարածքները) հանձնվում են «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի տնօրինությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք, որպես Հայաստանի Հանրապետության սեփականություն, հաշվառված են տվյալ պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարումը կամ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարումն իրականացնող լիազորված մարմնի պետական կառավարչական

հիմնարկի հաշվեկշռում և առկա է այդ հիմնարկի գույքային իրավունքի պետական գրանցումը:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N 1250-Ա որոշման պահանջների ապահովում:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի կողմից:

5. Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունմամբ հնարավոր կլինի իրականացնել գույքի հանձնման-ընդունման աշխատանքները և կապահովվի ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N 1250-Ա որոշման պահանջների իրականացումը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1250-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N1250-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին տեղեկանքի լրացման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1250-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.
Չկա:
2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.
Համապատասխանում է:
3. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)
Չկան:

ՏԵՂԵԿԱՆՔ

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1250-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N1250-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մասին հասարակությունը չի իրազեկվել և նախագծի մշակմանը մասնակցություն չի ունեցել: